



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

ՀՀ քաղաքացի՝ Մանե Աբրահամյանից  
(Էլ-փոստ maneabrahamyan89@gmail.com  
Հեռ. 094 52 34 69)

## Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

Հարգելի պարոն Սանոսյան

համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

Եղեգնուտ համայնքում 2020թ-ից գործում է երկու համայնքապետարան և կա երկու կնիք:

Կնիք 1 (հղումը՝ [http://armavir.mtad.am/files/comm\\_docs/3/206/91942.pdf](http://armavir.mtad.am/files/comm_docs/3/206/91942.pdf))

Կնիք 2 ( հղումը՝ [http://armavir.mtad.am/files/comm\\_docs/3/206/89673.pdf](http://armavir.mtad.am/files/comm_docs/3/206/89673.pdf))

Խնդրում եմ պատասխանել.

1. Ինչպե՞ս է ստացվել, որ համայնքում կա երկու կնիք:
2. Ո՞ր կնիքն է օրինական ուժի մեջ:
3. Ու՞մ է պատկանում հարկերը հավաքելու լիազորությունները:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով: (Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Հարգանքով՝ Մանե Աբրահամյան

**15 օգոստոս 2021թ.**

### ***Հանրային լրագրության ակումբի մասին***

*Հանրային լրագրության ակումբը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է: Մեր առաքելությունն է՝ խթանել խոսքի ազատությունը, բազմազանությունը և բազմակարծությունը Հայաստանում՝ զարգացնելով մասնակցային և հանրային թղթակցությունը, քաղաքացիական թղթակիցներին և պրոֆեսիոնալ լրագրողներին, լրատվամիջոցներին ու սոցիալական մեդիայի մասնագետներին, տեղեկատվական տեխնոլոգիաների և հասարակական այլ ոլորտների մասնագետներին կապող համագործակցության գրավիչ, աշխատանքային կամուրջներ ստեղծելով:*